ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունվարի 2025 թվականի №-Ա

«ԼՈՒԹ ՄԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի մայիսի 26-ի №179-Ա որոշմամբ «ԼՈՒԹ ՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Մարիյա» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0742 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0742 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2024 թվականի հունվարի 27-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2024 թվականի սեպտեմբերի 27-ը,

բ) Ընկերությունը 2024 թվականի սեպտեմբերի 27-ին Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման նախագիծը, որում, սակայն, առկա չեն եղել դրա անբաժանելի մաս կազմող՝ 35 կՎ ՕԳ-ի, 35 կվ լարման կողմում հաշվառման հանգույցի, 35 կՎ մալուխային գծի և 1*4000 կՎԱ 35/0.8-0.8 կՎ ԼՏԵ ենթակայանի կառուցման դրական փորձաքննություն անցած նախագծերը, որոնք ներկայացվել են Ընկերության 2024 թվականի հոկտեմբերի 11-ի գրությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ

հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Հանձնաժողովը 2024 թվականի նոյեմբերի 20-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 20-ի №ՄՄ/34.3-Մ2-12/5434-2024 գրությամբ,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, միևնույն ժամանակ, 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում 2024 թվականի դեկտեմբերի 16-ի գրությամբ հայտնել է, որ Կայանի կառուցման նախագծի անբաժանելի մաս կազմող 35 կՎ ՕԳ-ի, 35 կվ լարման կողմում հաշվառման հանգույցի, 35 կՎ մալուխային գծի և 1*4000 կՎԱ 35/0.8-0.8 կՎ ԼՏԵ ենթակայանի կառուցման դրական փորձաքննություն անցած նախագծերը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N0742-Ա, N0743-Ա, N0744-Ա, N0745-Ա, N0746-Ա, N0747-Ա, N0748-Ա, N0749-Ա, N0750-Ա և N0751-Ա որոշումները՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը Ընկերության կարիքների համար սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) տրամադրելու մասին, որից հետո վերոհիշյալ նախագծերի մշակման և պարզ փորձաքննության ենթարկելու

գործընթացները եղել են բավական ժամանակատար: Միևնույն ժամանակ, ընկերությունը խնդրել է Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու սահմանված ժամկետի ուշացումը համարել հարգելի,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0742 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի սեպտեմբերի 27-ը Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման նախագիծը, որում, սակայն, առկա չեն եղել դրա անբաժանելի մաս կազմող՝ 35 կՎ ՕԳ-ի, 35 կվ լարման կողմում հաշվառման հանգույցի, 35 կՎ մալուխային գծի և 1*4000 կՎԱ 35/0.8-0.8 կՎ ԼՏԵ ենթակայանի կառուցման դրական փորձաքննություն անցած նախագծերը (նշված փաստը ընդունվել է նաև Ընկերության կողմից վարչական վարույթի շրջանակում ներկայացված գրությամբ), և Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, նշված ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2025 թվականի մայիսի 27-ը, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու՝ Կարգով սահմանված հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Ընկերությունը բավարար չի հիմնավորել իր 2024 թվականի դեկտեմբերի 16-ի գրությամբ ներկայացված այն փաստարկը, որ ԼԷ №0742 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված պահանջվող փաստաթղթերի ուշացման պատճառ հանդիսացած՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումների ընդունմանն ուղղված գործողությունները իր կողմից ավելի վաղ ձեռնարկված լինելու հանգամանքը: Ավելին, Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու ԼԷ №0742 լիցենզիայով ամրագրված ժամկետը մեկ անգամ համարվել է երկարաձգված և նշված պարտավորության կատարման համար Ընկերությունը ունեցել է ընդհանուր առմամբ շուրջ 16 ամիս ժամանակահատված, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0742 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի մայիսի 16-ի №O.AB.100.12CIB.PIED.0.9288.23 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ գումարից 3 125 000 (երեք միլիոն հարյուր քսանհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի հուլիսի 11-ը գործողության ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
3. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
հունվարի 2025թ.